Տվյալ դեպքում, հայցվորը վճարել է օրենքով սահմանված 50000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը, և խնդրել է պատասխանողից բռնագանձել նախապես վճարված պետական տուրքի գումարը, իսկ քանի որ դատական ծախսերը բաշխվում են բավարարված հայցապահանջներին համամասնորեն, իսկ հայցն ենթակա է ամբողջությամբ բավարարման, ուստի պատասխանողից հօգուտ հայցվոր ընկերության պետք է բռնագանձել նախապես վճարված՝ 50000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Ինչ վերաբերում է դատական ծախս՝ փաստաբանի խելամիտ վարձատրությանը, ապա հայցվոր կողմը նման պահանջ չի ներկայացրել, հետևաբար այդ հարցը ևս պետք է համարել լուծված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում, ներկայացվել է պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճ, հետևաբար օրենքով սահմանված կարգով վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>3. Եզրափակիչ մաս</u>

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101, 104, 109, 189, 191, 192, 194, 198, 234.5.-234.12., և 360-362 հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. <<Մեծ Ծիածան>> ՍՊ ընկերության ընդդեմ <<ՀՀ փորձագիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության՝ <<Մեծ Ծիածան>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին <<ՀՀ փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն Դ. Ղուլյանի 15.03.2023թ. թիվ 125-Լ որոշումն անվավեր ճանաչելու, նախապես վճարված պետական տուրքի գումարը բռնագանձելու պահանջների մասին հայցը բավարարել:

2. Անվավեր ճանաչել <<Մեծ Ծիածան>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին <<ՀՀ փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն Դ. Ղուլյանի 15.03.2023թ. թիվ 125-Լ որոշումը:

3. <<ՀՀ փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ից հօգուտ <<Մեծ Ծիածան>> ՍՊ ընկերությանը բռնագանձել 50000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

4. Որպես դատական ծախս՝ փաստաբանի խելամիտ վարձատրության հարցը համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by YESOYAN YEREM 2711740048 Date: 2023.09.26 15:43:39 AMT ԵՐԵՄ ԵՍՈՅԱՆ